ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 17/3

ՊԱՐՋԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԻՄՆԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի ը) կետով ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Ընտրված մասնակից և առաջին տեղ զբաղեցրած «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ին ներկայացնել առաջարկ՝ կնքելու համապատասխան պայմանագիր:

2. Հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և սահմանված կարգի համաձայն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համապատասխան կայքում տեղադրելու համար:

3. Հիմք ընդունելով «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած լրացուցիչ և անհրաժեշտ փաստաթղթերը, վերջինիս հետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո (5 օր անց), 03.10.12թ. կնքել պայմանագիր:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Ի. ՉԱՔԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ
Հեռ.՝ +37410 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք Երևան
Վ. Սարգսյան 10,
Տարածք 114

Գաղտնի

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ
պետական կառավարչական հիմնարկ

ՆԱՄԱԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտի վերաբերյալ

Երևան-2012թ.

Որակավորված Աուդիտոր, գրանցված ՀՀ պետական ռեգիստրում,
Աուդիտորական ծառայությունների իրականացման ԱԾ թիվ 082 լիցենզիա,
տրված ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից

ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Մենք ավարտեցինք «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) 01.01.11թ.-31.12.11թ. ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռների, ինչպես նաև Հաշվետու ժամանակաշրջանում N 010101 02 «Վերահսկիչ պալատի պահպանում», N11 01 01 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» և N 01 01 0110 «Վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմած հաշվետվությունների աուդիտը, որի արդյունքում տրվեց դրական եզրակացություն:

Աշխատանքները կատարվեցին Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում մենք ուսումնասիրել ենք Վերահսկիչ պալատի վերահսկողության կառուցվածքը՝ նպատակ ունենալով որոշելու մեր կողմից իրականացվող աուդիտի ընթացակարգերը և ոչ թե Վերահսկիչ պալատի ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու կամ ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չունեցող խախտումներն ու բացթողումները բացահայտելու համար:

Աուդիտի անցկացման ընթացքում ի հայտ են եկել Վերահսկիչ պալատի գործունեության և կատարած աշխատանքին վերաբերող որոշ թերություններ, որոնք մեր կարծիքով արժանի են Վերահսկիչ պալատի ղեկավարության ուշադրությանը: Դրանց քննարկումը մանրամասն դիտարկումներով և առաջարկություններով կցվում է սույն նամակին:

Աուդիտն անցկացվեց բարենպաստ աշխատանքային պայմաններում: Աշխատանքների հաջող անցկացմանը նպաստեց Վերահսկիչ պալատի ղեկավարության և պատասխանատու այլ աշխատակիցների հետ մեր սերտ համագործակցությունը: Աուդիտի անցկացման ընթացքում մեզ տրամադրվեցին Վերահսկիչ պալատի հաշվետու ժամանակաշրջանի համար կազմած ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական փաստաթղթերը և անհրաժեշտ այլ տեղեկատվություն, որոնց շնորհիվ ժամանակին ավարտվել են աուդիտի աշխատանքները, ինչի համար մեր գոհունակությունն ենք հայտնում Վերահսկիչ պալատի ղեկավարությանը:

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն Ա. Անդրեասյան

Աուդիտոր Վ. Խաչիբաբյան

Երևան
19 նոյեմբերի, 2012թ.

Հաշվետու ժամանակաշրջանի դիտարկումներ և առաջարկություններ

1. Դիտարկում

Վերահսկիչ պալատի աշխատակցուհի Դոնարա Հարությունյանի մահվան կապակցությամբ տրված օգնության գումարը և հոկտեմբեր ամսվա հասանելիք աշխատավարձը 211 հազ.դրամ ընդհանուր գումարով, 01.11.11թ. N38 դրամարկղի ելքի օրդերով տրվել է Արթուր Օհանջանյանին,որը ըստ վերջինիս գրած դիմումի, հանդիսանում է Դոնարա Հարությունյանի քրոջ որդին: Նշված գումարը վճարելու համար ամբողջությամբ չեն պահպանվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 197 հոդվածով սահմանված պայմանները, այն է, չի ներկայացվել նրա ընտանիքի անդամ հանդիսանալու փաստը հիմնավորող փաստաթղթերը:

Հետևանք

Նման պարագայում նշված գումարի չափով վճարված գումարը կարող է համարվել չհիմնավորված ծախս, իսկ համապատասխան հիմնավորող փաստաթղթեր չներկայացնելու դեպքում Ա. Օհանջանյանին վճարված գումարը կդիտարկվի որպես ֆիզիկական անձին վճարված եկամուտ՝ իր հարկային հետևանքներով:

Առաջարկություն

Առաջարկվում է այսուհետ դրամարկղից կանխիկ դրամ ելքագրելիս, ղեկավարվել ՀՀ օրենսդրության պահանջներով՝ կցելով համապատասխան հիմնավորող փաստաթղթերը: Արթուր Օհանջանյանին վճարված կանխիկ գումարի համար դուրս գրված դրամարկղի ելքի օրդերն ապահովել ընտանիքի անդամ հանդիսանալու փաստը հիմնավորող փաստաթղթերի և ընտանիքի անդամի կողմից տրված համապատասխան լիազորագրի առկայությունը:

Վերահսկիչ պալատի ղեկավարության պատասխանը

Առաջարկությունն ընդունում ենք:

2. Դիտարկում

Պահեստներում 01.01.2012թ. դրությամբ առկա են առանձին նյութական արժեքների մնացորդներ որոնց մեծ մասը չի օգտագործվում, իսկ 48 անվանում 1798 հազ. դրամ արժողությամբ նյութական արժեքներ հաշվետու ժամանակաշրջանում ընդհանրապես շարժ չեն ունեցել:

Հետևանք

Պահեստում առկա չօգտագործվող ապրանքանյութական արժեքները կարող են արժեզրկվել, իսկ հետագայում դառնալ օգտագործման համար ոչ պիտանի:

Առաջարկություն

Վերլուծել պահեստներում առկա ապրանքանյութական արժեքների իրական վիճակը, պիտանելիության աստիճանը և հետագայում դրանց օգտագործելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

Վերահսկիչ պալատի ղեկավարության պատասխանը

Առաջարկությունն ընդունում ենք:

ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ
Հեռ.՝+37410 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք Երևան
Վ. Սարգսյան 10,
Տարածք 114

Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները (N 01 01 01 02 «ՀՀ վերահսկիչ պալատի պահպանում», N11 01 01 01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» և N 01 01 01 10 «ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ» ծրագրեր), հաշվետու ժամանակաշրջանում նշված ծրագրերի Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին կազմած հաշվետվությունները, 230 և 231 (140, 143) ենթահաշիվներով բյուջեից ֆինանսավորված գումարների շարժի մասին տեղեկանքները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը
ֆինանսական հաշվետվությունների համար Վերահսկիչ պալատի ղեկավարությունը պատասխանատու է նշված ֆինանսական հաշվետվությունները Բյուջետային կազմակերպությունների համար ՀՀ կառավարության կողմից նախատեսված կարգի պահանջներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին հսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը
Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:
Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է Վերահսկիչ պալատի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել Վերահսկիչ պալատի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները և Բյուջետային ծախսերի ու բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունները Վերահսկիչ պալատի ֆինանսական գործունեության և ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների ծախսերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրամանի պահանջների:

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն Ա. Անդրեասյան

Աուդիտոր Վ. Խաչիբաբյան

Երևան
19 նոյեմբերի, 2012թ.

Որակավորված Աուդիտոր, գրանցված ՀՀ պետական ռեգիստրում,
Աուդիտորական ծառայությունների իրականացման ԱԾ թիվ 082 լիցենզիա,
տրված ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից

Ղեկավարության պատասխանատվության վերաբերյալ հղում՝ 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար

Սույն հղումը, որը պետք է համատեղվի անկախ աուդիտորի հաշվետվության մեջ նշված անկախ աուդիտորի պատասխանատվության հետ, նպատակ ունի տարանջատել Վերահսկիչ պալատի ղեկավարության և անկախ աուդիտորի համապատասխան պատասխանատվությունները, որոնք վերաբերում են Վերահսկիչ պալատի ֆինանսական հաշվետվություններին:
Վերահսկիչ պալատի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների կազմման համար, որոնք ճշմարիտ ներկայացնում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշիռները և Բյուջետային ծախսերի ու բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունները:
Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս ղեկավարությունն ունի հետևյալ պատասխանատվությունները.
- Հաշվապահական հաշվառման համապատասխան սկզբունքների ընտրություն և վերջիններիս հետևողական կիրառում:
- Կատարել գնահատումներ և կայացնել որոշումներ, որոնք հիմնավորված և ողջամիտ են:
- Նշել արդյոք իրականացվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրամանի պահանջները, հրապարակել բոլոր էական շեղումները և տրամադրել դրանց բացատրությունները ֆինանսական հաշվետվություններում:
- Պատրաստել ֆինանսական հաշվետվություններն անընդհատության հիմունքով այնքան ժամանակ, քանի դեռ Վերահսկիչ պալատը կշարունակի իր գործունեությունը կանխատեսելի ապագայում:
Ղեկավարությունը պատասխանատու է նաև.
- Վերահսկիչ պալատում ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և կիրառման համար:
- Ապահովել պատշաճ հաշվապահական հաշվառում՝ Վերահսկիչ պալատի ֆինանսական վիճակի մասին, որը ցանկացած պահի կարտացոլի ճշմարիտ տեղեկատվություն և կապահովի պահպանել սահմանված հաշվապահական գրանցումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:
- Կազմակերպել Վերահսկիչ պալատի ակտիվների պահպանումը՝ ղեկավարությանը հասանելի ողջամտության սահմաններում և
- Խարդախության և այլ խախտումների հայտնաբերում և կանխարգելում:
Վերահսկիչ պալատի ղեկավարության կողմից 2011թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները տրամադրվել են 2012թ. հոկտեմբերի 15-ին:

Հ. Յավրյան
Աշխատակազմի ղեկավար

Ն.Սահակյան
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

19 նոյեմբեր, 2012
ՀՀ Վերահսկիչ պալատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

2012 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 23/1

«ԲԻ -ԴԻ -Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՈՒԴԻՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 17/3 որոշման համաձայն, «ԲԻ -ԴԻ -Օ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության կողմից աուդիտի է ենթարկվել ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի ֆինանսական գործունեությունը:

Աուդիտի արդյունքների վերաբերյալ ընկերության կողմից ներկայացված ,,Ֆինանսական հաշվետվությունը,, և ,,Նամակ ղեկավարությանը,, նյութերն ուսումնասիրելուց և քննարկելուց հետո ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից ՀՀ վերահսկիչ պալատի Աշխատակազմում իրականացված աուդիտի արդյունքների մասին աուդիտորական եզրակացությունն ընդունել ի գիտություն:
2. Հիմք ընդունելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված հրապարակայնության սկզբունքը՝ այն տեղադրել ՀՀ վերահսկիչ պալատի ինտերնետային կայք էջում:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ՋԱՔԱՐՅԱՆ